

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2004 թվականի N 908-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 20-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի N 902 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետությունից փայտանյութի և դրանից պատրաստված որոշ ապրանքների արտահանման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2004 թ. հունիսի 30
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2004 թվականի
հունիսի 25-ի N 908-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 44 (փայտանյութ և դրանից արտադրանք, փայտածուխ) խմբին դասվող ապրանքների (այսուհետ՝ փայտանյութ) Հայաստանի Հանրապետությունից արտահանման կարգը:

2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում ԱՏԳ ԱԱ 4405 00 000, 4412-4417, 4418 10, 4418 20, 4419 00, 4420, 4421 10 000 և 4421 90 910 ծածկագրերին դասվող ապրանքների, ինչպես նաև «Վերաարտահանում» կամ «Տարանցիկ փոխադրում» մաքսային ռեժիմներով հայտարարագրված ապրանքների արտահանման վրա:

3. Արտահանվող փայտանյութի բացթողումը մաքսային մարմինների կողմից իրականացվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից տրված «Արտահանվող և ձեռք բերված փայտանյութի կամ դրանից պատրաստված ապրանքների համապատասխանության մասին» եզրակացությունը, որը հանդիսանում է խիստ հաշվառման փաստաթուղթ՝ ձևը կցվում է:

4. Եզրակացությունը տրամադրվում է ստորև նշված բոլոր փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում կամ մերժվում է սույն կարգի 7-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝

ա) դիմում, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը.

բ) ապրանքի ձեռքբերումը հավաստող փաստաթղթեր:

5. Եզրակացությունը կազմվում է 3 օրինակից, որոնցից մեկ օրինակը պահպանվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում, երկու օրինակը տրվում է դիմողին: Արտահանման ժամանակ հայտատուն օրինակներից մեկը հանձնում է մաքսային մարմիններին:

6. Հայաստանի Հանրապետությունից փայտանյութի արտահանման համար ձեռք բերված եզրակացությունը ենթակա չէ փոխանցման այլ անձանց:

7. Եզրակացությունը տալու գրավոր մերժման հիմք կարող են հանդիսանալ՝

ա) ներկայացված փաստաթղթերում սխալ տեղեկությունների առկայությունը.

բ) ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

գ) պահանջվող փաստաթղթերից որևէ մեկի բացակայությունը.

դ) արտահանվող փայտանյութի տեսակի և (կամ) քանակի անհամապատասխանությունը ձեռք բերված փայտանյութի տեսակին և (կամ) քանակին:

8. Եզրակացությունը տալու անհիմն մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Ձև

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԵՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ԿԱՄ ԴՐԱՆԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՈՐՈՇ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

C E R T I F I C A T E

N _____

Արտահանող (կազմակերպության անվանումը,
ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

Exporter (name, address, contacts)

Ձեռքբերման անդորրագրի կամ հաշիվ-ապրանքագրի

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը,
անդորրագրի կամ հաշիվ-ապրանքագրի համարը)

Invoice (name, address, number)

Ձեռք բերված փայտանյութի տեսակը, քանակը

(Type and quantity of wood)

Արտահանվող փայտանյութի տեսակը, քանակը

(Type and quantity of wood for export)

Արտահանվող փայտանյութի համապատասխանությունը

ձեռք բերված փայտանյութի տեսակին և քանակին

(Type, nature, quantity and Certificate of

Origine of wood for export)

Եզրակացության գործողության ժամկետը

Validity period of certificate

Գործողության սկիզբը _____ 200 թ.

Valid from

Գործողության ավարտը _____ 200 թ.

Valid up to

Ձեռք բերված փայտանյութի բացթողման անդորրագիրը օրինական է:

Տրված է _____ 2004 թ.

Կ. Տ.